ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ս. Ռ. ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

Դարասկզբին, ինչպես նշում է Գարեգին Նժդեհը, «անպատրաստ գտնվեցինք դեպքերի իմաստը հասկանալու, նրանք մեր ձգտումներին համընթաց դարձնելուն, անզոր եղանք ուղղություն տալու, և դեպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր տրամադրություններին՝ արտաքին իրողությունների թելադրմամբ»։

Դա դարասկիզբն էր, իսկ այսո՞ր...

Ընդհանրական քաղաքակրթությունն այսօր թևակոխում է բնապատմական զարգացման նոր հասարակարգ։

Հայությունը, հայերս ներքուստ և արտաքուստ, հոգով և մտքով պատրա՞ստ ենք արդյոք հասկանալու այս նոր դեպքերի իմաստը, աշխարհի, ընդհանրական քաղաքակրթության լինելության, զարգացման և հարատևման տրամաբանությունը։ Պատրա՞ստ ենք արդյոք, դրանք ներդաշնակելու, համընթաց դարձնելու մեր ազգային ձգտումներին։ Կազմակերպչորեն, պետականորեն ի զորո՞ւ ենք ուղղություն տալ նրանց, որ դեպքերը զարգանան մեր ազգային անհրաժեշտությունների, տրամադրությունների, ձգտումների և ոչ արտաքին իրողությունների թելադրմամբ։

Անցյալի անպատրաստվածությամբ պայմանավորված՝ մեր բազում կորուստները պետք է պարտագրեն մեզ զգոնության. Հայոց Պետականության խնդիրների լուծման ոչ այնքան զգայական, որքան գիտավերլուծական մոտեցման։

Ժամանակն անզիջում շարժվում է առաջ՝ շարունակաբար ու անդադրում տանելով աշխարհը, քաղաքակրթությունը անցյալի ինքնանպատակ գոյության մղձավանջից՝ պարզունակ կարգավորվածությունից, քաոսից դեպի բանականության հասանելի ավելի բարձր կարգավորվածություն, լինելության նպատակամետություն։ Հասարակական բոլոր համակարգերի համար կենսապահովման, կենսագործունեության և զարգացման գործընթացները իրենց բնական էությամբ անշրջելի են, ժամանակի կորուստը չի վերադարձվում, իսկ թերացումներն ու ուշացումները չեն ներվում։

Այսօր դեպքերի այսօրինակ ընթացքին, ժամանակի հրամայականին պատրաստ լինելու համար նախ և առաջ պահանջվում է ունենալ իր կառուցվածքային տրամաբանությամբ արդիական պետականություն՝ համապատասխան հային և հայոց առկա իրականությանը, նրա ազգային էությանը, ձգտումներին, ինչպես և հնարավորություններին։ Պահանջվում է, որ նա իր կառուցվածքային համակարգով, իր կենսագործունեության մեջ լինի դինամիկ և ներդաշնակ քաղաքակրթության զարգացմանը՝ նրա բոլոր ժամանակաշրջաններում։

Կկարողանա՞նք ինքնակազմակերպվել, կկարողանա՞նք դնել մեր ոգին, մեր միտքը, մեր ԾՍ-ը հայոց պետականության հիմքում, ուրեմն կկարողանանք նաև ազատ, անկախ և համարձակ քայլել քաղաքակրթության զարգացման վերընթացով՝ պահպանելով մեր միացյալ, խաղաղ տունը քաղաքակրթությունների խաչմերուկում։

Արդի քաղաքակրթությունը նոր հասարակարգի իր դրսևորմամբ, որպես բնական երևույթ, իրենից ներկայացնում է որակական երկփեղկվածությունով հասարակական մեկ ամբողջական համակարգի ոչ գծային՝ որոշակի ընտրություն (համակարգի բիֆուրկացիոն անցում) ունեցող ֆոր-

մացիա, որը կարելի է կոչել նաև «Հասարակական համակարգերի գիտավերլուծական ղեկավարման հասարակարգ»։

Մարդկային հանրության՝ ընդհանրական քաղաքակրթության, բնապատմական զարգացումն իր էությամբ և տրամաբանությամբ հազարամյակների ընթացքում հին ու նոր ազգերի, քաղաքակրթությունների, ժողովուրդների, պետությունների տարաբնույթ ազդեցությունների, բախումների հետևանքով գտնված և կորսված իրականությունների պատմական զարգացումն է։ Մարդկության զարգացման վաղ շրջանում այն գործել է դասական «Փորձի և սխալի» մեթոդով՝ հենված առավելապես «ամենափոքր գործողության» սկզբունքին։ Եթե այդ սկզբունքը գործում է ամբողջի՝ տարածաժամանակի և մատերիայի ողջ ընդհանրության համար, ապա մատերիայի բանական ձևի՝ հասարակական բոլոր տարատեսակ համակարգերի (ազգեր, ժողովուրդներ, պետություններ և նրանց տարրերը՝ մարդու) համար արդեն գործում է նաև նպատակամետ գործողության սկզբունքը։ Այն իր հերթին դառնում է վերլուծական մեթոդի և նրա կառուցվածքային տրամաբանական կառույցի ձևավորման, ծավալման և շարունակական զարգացման գործընթացի պատճառ։

Հասարակական մակրոհամակարգերի՝ (ժողովուրդ-պետություն, ընդհանրություն) բնական զարգացմանը զուգընթաց, նպատակամետ և ամենափոքր գործողությունների սկզբունքների հարաբերությունում աստիճանաբար գերակշիռ տեղ է գրավում նպատակամետ գործողության սկզբունքը։ Եվ եթե ինդուստրիալ դարաշրջանում արդեն հասարակական միկրո, մակրոհամակարգերի համար հավասարաչափության մեջ էին գործում նպատակամետ ու ամենափոքր գործողության սկզբունքները, իսկ համակարգերի ղեկավարումը կազմակերպվում էր հավասարապես փորձի ու սխալի և գիտավերլուծական մեթոդների միջոցով, ապա հետինդուստրիալ դարաշրջանում հասարակական համակարգերի կենսապահովման, կենսագործունեության և զարգացման գործընթացներում առաջնային և ծավալուն տեղ են զբաղեցնում նպատակամետ գործողության սկզբունքին հենված գիտավերլուծական ղեկավարման մեթոդները։

Հայտնի է, որ համակարգերի դինամիկ հավասարակշռության տարաբնույթ խախտումների գումարային ազդեցությունը լրջորեն խոչընդոտում է ամբողջական համակարգի, այս դեպքում ընդհանրական քաղաքակրթության բնականոն զարգացմանը՝ հավանական դարձնելով տարբեր անհարկի, բացասական անցումների հնարավորությունը, սպառնալով անգամ համակարգի գոյությանը։

Ընդհանրական քաղաքակրթության զարգացման վերջին հարյուրամյակի ընթացքում գիտատեխնիկական առաջընթացը անհամեմատ գերազանցեց աշխարհի համընդհանուր հոգևոր զարգացմանը։ Այն իր հերթին շատ երկրներում խախտեց հոգևոր և նյութական արժեքների դինամիկ հավասարակշռությունը, որն էլ կարող էր վճռորոշ դեր ունենալ ընդհանրական համակարգի ներկայիս բիֆուրկացիոն եզրի վրա։

Մարդկային հանրության զարգացումն այսօրվա իրականության մեջ, որը բնութագրվում է համընդհանուր գիտական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական, հոգևոր, մտավոր, տեղեկատվական և նյութական արժեքների, հարստությունների բևեռված բաշխվածության զարգացման աննախադեպ թռիչքով, հասել է մարդկային մտքի կատարելության դրսևորման այնպիսի մակարդակի, ուր ընդհանրական քաղաքակրթության հետագա լինելության, կենսագործունեության և զարգացման համար հստակորեն նախանշվում է երկու իրարամերժ ճանապարհ։ Առաջինը աշխարհի և ընդհանրական քաղաքակրթության լինելության և հարատևման ճանապարհն է, իսկ երկրորդը աշխարհի և քաղաքակրթության նպատակային կամ պատահական ոչնչացումն է։ Առաջին ճանապարհի հավանականությունը պայմանավորված է ազգերի, ժողովուրդների և պետությունների անհակադիր կենսապահովմամբ, խաղաղ կենսագործունեությամբ ու անընդհատ զարգացում

ապահովող դինամիկ հավասարակշռության, փոխշահավետ համագործակցության և փոխօգնության իրական լինելությամբ, այսինքն՝ դրանց բարոյանպատակամետ կարգավորվածությամբ։ Երկրորդ ճանապարհը պայմանավորված է աշխարհում զանգվածային ոչնչացման սպառազինության՝ ինքնանպատակության հասնող գերկուտակումով, համաշխարհային ծավալների աճող շրջակա միջավայրի բնապահպանական, ինչպես և ընդհանրական քաղաքակրթության բնականոն զարգացումը խոչընդոտող տարբեր ազգերի և ժողովուրդների հոգևոր ոլորտի տարաբնույթ աղետներով, այսինքն՝ բարոյազուրկ կարգավորման աճով։

Զանգվածային ոչնչացման սպառազինության ընդհանուր քանակն այսօր բավարարում է աշխարհը բազմակի ոչնչացնելուն։ Ավելորդ է նշել, որ առկա պայմաններում աշխարհաքաղաքական յուրաքանչյուր ճգնաժամային խառնաշփոթ իրավիճակում չի բացառվում, անգամ թյուրիմացաբար, աշխարհի և քաղաքակրթության ոչնչացումը։ Հետ չի մնում նաև տեխնոլոգիաների, արտադրությունների կողմից շրջակա միջավայրի աղտոտման անվերահսկելի և չվերականգնվող զանգվածային երևույթը. դրա աճման հեռանկարը ընդհանրական քաղաքակրթությանը աստիճանաբար տանում է լինել թե չլինելու հարցադրմանը։ Սակայն աղետածին են դարձել այսօր ոչ միայն ռազմատեխնոլոգիականը, այլև հոգևորը։ Ընդհանրական քաղաքակրթության բնականոն զարգացումը խոչընդոտող հոգևոր աղետներից կարելի է նշել, օրինակ, ներկայիս որոշ նոր ազգերի և պետությունների համար իրենց բնապատմական զարգացմանը ոչ համապատասխան՝ արհեստականորեն արագացված հոգևոր, մշակութային, գիտատեխնիկական արժեքների անհարկի ներմուծումը։ Այն առաջացնում է ազգային մտածողության, աշխարհընկալման ձևախեղում, ազգային հոգևոր արժեքների աղքատացում, արժեզրկում, կյանքի և գործունեության նպատակայնության կորուստ։ Այդ գործոնները տվյալ համակարգ են ներբերում ինքնանպատակ կենսագործունեության հետևանքով առաջացող աննպատակ շարժման գերակայության՝ ողբերգություն, որը հղի է համակարգի այլասերման, ինչպես և ինքնատրոհման վտանգով։

Որպես առավել վտանգավոր հոգևոր աղետ, կարելի է նշել մեկ այլ երևույթ, երբ ծագումնաբանորեն և պատմականորեն հոգևոր, աշխարհաճանաչողական, աշխարհընկալումային, բարոյահոգեբանական պատկառելի ժառանգություն ունեցող մի շարք հին ազգեր այսօրվա իրականության մեջ ինչ-ինչ պատճառներով զրկված են իրենց հոգևոր ներունակ ժառանգությունից՝ իրենց հնարավորությունները ամբողջությամբ դրսևորելու և մարդկությանը տրամադրելու հարցերում։ Այն ոչ դրականորեն է անդրադառնում ոչ միայն իրենց, այլև ընդհանրական քաղաքակրթության բնականոն զարգացման վրա։ Այդ ազգերը դեռևս շարունակում են մնալ գոյատևման ինքնարգելակող մղձավանջում, որը գրեթե բացառում է ընդհանրական քաղաքակրթության հարատևման անհրաժեշտ զարգացման գործընթացին նրանց լիարժեք մասնակցությունը։ Այն հիմնականում պայմանավորված է ապագաղութացած, նորանկախ այդ երկրների քաղաքական-կառուցվածքային, տնտեսական և այլ կառույցների արհեստական՝ իրենց բնական էությանը ոչ համապատասխան իրականություններով։ Իրավիճակի հակասությունը պայմանավորված է նաև այդ ազգերի հոգևոր ազատության, տնտեսական և սոցիալական անկախության պաշտպանվածության, ժողովրդավարության, ինչպես և իրենց իշխանությունների կողմից ազգային պետական մտածողության բացակայությունով, անհատի և ազգի ստեղծագործական ինքնաբացահայտմանն ու զարգացմանը անհրաժեշտ հոգևոր և նյութական համապատասխան միջավայրերի արհեստական բացակայություններով։

Ընդհանրական քաղաքակրթության, բանական մտածողության առջև իրավամբ կանգնել է պատասխանատու ընտրության խնդիր։ Եվ երևի թե դրանով ևս կարելի է հիմնավորել քաղաքակրթության բնապատմական

զարգացման ներկայիս փուլում արդեն ուրվագծվող պետությունների և հասարակությունների ներքին փոխհարաբերությունների, կառուցվածքային ձևերի նոր հասարակարգի՝ ազգերի, ժողովուրդների, պետությունների գիտավերլուծական զարգացման բնական ձևավորման պատմական անհրաժեշտության գործընթացը։

Մեր մոլորակի վրա մարդկային հանրության բնապատմական զարգացումը այսուհետև մտնում է այնպիսի մի դարաշրջան, ուր արդեն փորձի և սխալի մեթոդին յուրահատուկ փոքրիկ սխալն անգամ կարող է լուրջ հետևանքներ ունենալ, անվերականգնելի աղետներ բերել ոչ միայն երկրագնդի մի փոքրիկ տարածաշրջան, այլև հարցականի տակ դնել ողջ մարդկության գոյությունը։ Անվիճելի է, որ այսուհետև սխալվել չի կարելի, քանզի ուղղելը գրեթե բացառվում է։ Ոչ լոկ գիտական հետաքրքրության, այլ հրատապ խնդիր է, որ հասարակական բոլոր՝ միկրո, մակրո, մեգահամակարգերի կենսապահովման, կենսագործունեության և կառավարման հարցերը լուծվեն ավելի շուտ բանական մատերիային հատուկ, բարոյանպատակամետ գործողության սկզբունքին հենված գիտավերլուծական մեթոդներով, քան ամենափոքր գործողության սկզբունքի՝ փորձի և սխալի մեթոդով։

Այսպիսով՝ թե՛ գիտական և թե՛ կիրառական առումով, ինչպես բոլոր ազգերի, այնպես էլ հայության համար հրատապ անհրաժեշտության խնդիր է այսօր գիտավերլուծական ղեկավարման՝ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող պետության նախնական մոդելների ստեղծումը, որն ի դեպ, պայմանավորված է ոչ միայն վերը շարադրված հանգամանքներով, այլև աշխարհի մի ստվար մասի՝ արդի արմատական վերակառուցման գործընթացով։

Ամեն մի երկիր, ըստ իր ժողովրդի հոգևոր, մտավոր, նյութական, բնատարածքային ներունակությունների, այս գործընթացը փորձի և սխալի մեթոդով կանցնի յուրովի, ուր իրենց դերը կունենան դեպքերի ընթացքը, պատահական և նպատակային ազդեցություններն ու հակազդեցությունները։ Այդ գործընթացում յուրաքանչյուր երկիր իր ճշգրտումներով ի վերջո կստանա իր համապատասխան ձևն ու բովանդակությունը։ Սակայն գտնվել վերակառուցման, վերակարգավորման գործընթացում, հիմնականում հենված փորձի և սխալի մեթոդին, նշանակում է գտնվել տարատեսակ անպաշտպանվածության վիճակում։ Այն, ի դեպ, շատ երկրների, ինչպես և Հայաստանի Հանրապետության, համար արդեն արտահայտվում է նյութական, բարոյական և հոգևոր անհարկի կորուստների խորացող ճգնաժամով։

Կարծում ենք, խիստ կարևոր է դարձել այլևս չապավինել փորձի և սխալի դանդաղընթաց, առավել կորստաբեր ճանապարհին։ Երբ նորանկախ պետություններում դեռ վերջնականապես չեն ձևավորվել կառավարման նոր համակարգերը, ինչպես և հասարակության ոչ ժողովրդավարական՝ արհեստական, վերաշերտավորումը, ուր անպայմանորեն տեղ կգտնեն մի շարք ոչ բնականոն, բացասական, անցանկալի դժվարություններ և բնականոն զարգացումը խոչընդոտող այլ հանգամանքներ, ավելի շահեկան ենք համարում օգտվել առկա իրականությունից և այս պետությունները փորձել վերակառուցել արդեն որպես համակարգված, բնական, գիտավերլուծական ղեկավարման՝ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող, ազգային ժողովրդավարական քաղաքացիական պետություններ։

Բնական, գիտավերլուծական (ազգային, ժողովրդային, բազմազգ), քաղաքացիական պետություն ասելով հասկանում ենք հասարակական պետական ընդհանուր մի համակարգ, ուր՝

բնականությունը այն է, որ պետության ընդհանուր համակարգի ներքին կառուցվածքային և կազմակերպչական կառույցները որոշող օրենքները, օրինաչափությունները և սկզբունքները համապատասխանեցված են վերլուծական մտածողական տրամաբանությանը, հասարակության գոյու-

թյան և զարգացման բնական օրենքներին և, համակարգի զարգացմանը զուգընթաց, դինամիկ ինքնակարգավորման միջոցով ձգտում են չխախտել բնական ներդաշնակությունը։ Այն հենված պետք է լինի տեսակի պահպանման և բնական ընտրության օրենքների վրա։ Համակարգի կենսագործունեության և զարգացման անընդհատությունը և ներդաշնակությունը ապահովվում են գործընթացների պատճառահետևանքային հետադարձ կապի բնական մեխանիզմներով և ազդեցություն-հակազդեցություն հարաբերման դինամիկ հավասարակշռության պահպանման միջոցով։

Գիտավերլուծական ղեկավարումը պետության և ժողովրդի, որպես հասարակական դինամիկ համակարգի, կյանքի, գործունեության և զարգացման ղեկավարման այնպիսի մոտեցում է, որի հիմքում դրվելու են պետության և հասարակության անհակադիր և դինամիկ զարգացման մեջ գտնվող կառավարման կառույցներ, որոնք, հենվելով հասարակության բնական օրենքներին, ձգտելով լինել դրանց ներդաշնակ, կլինեն ինքնակարգավորվող և ինքնազարգացող։ Կենսագործունեության և զարգացման օրենքները կներկայանան որպես ազգի կամ ժողովրդի խնդիրներ, անհրաժեշտությունները արտահայտող ֆունկցիաներ։ Այս կերպ գրեթե կբացառվեն պետության և հասարակության կյանքում անհատի կամ ղեկավար մարմնի կամայականությունը, նրանց կողմից թույլ տրվող հնարավոր սխալներն իրենց անցանկալի հետևանքներով՝ զերծ պահելով հասարակության զարգացման կորը տարաբնույթ խզումներից և խոտորումներից։

Հասարակական համակարգերը, ըստ իրենց պատմական ձևավորվածության, կարող են լինել՝ ազգային, ժողովրդային, բազմազգ և ֆեդերացիական։

Ազգային ասելով հասկանում ենք հասարակական այն համակարգը, ուր հասարակությունը ըստ ազգության միատարր է։ Այդօրինակ համակարգը ամբողջովին բարձրանում է իր ծագումնաբանական հենքի վրա, գերակայորեն և նպատակայնորեն ծառայում է ազգային խնդիրներին, որոնց բնական լուծումները, ի դեպ, չեն կարող չլինել ի հաշիվ այլ ազգերի ազգային բնական, անօտարելի խնդիրների։ Այն գտնվում է համապատասխանության և ներդաշնակության մեջ ազգի բնապատմական զարգացման տվյալ ժամանակաշրջանի մակարդակի հետ։ Կենսագործունեությունը և զարգացումը նպատակային են, կոչված են հարատևման և ոչ գոյատևման՝ ինքնանպատակ գոյության։ Հոգևոր, մտավոր և նյութական արժեքների ստեղծման ճանապարհով հստակեցնում է իր տեղը, դերը և նշանակությունը ընդհանրական քաղաքակրթությունում՝ պայքարելով, որ այն լինի ավելի շատ քաղաքակրթություն արարող, քան սպառող։

Ժողովրդայինը հասարակական այն համակարգն է, ուր հասարակությունը կազմված է բազմազգ տարրերից, որոնց տարածական և միկրոհամակարգային բաշխվածությունը հավասարաչափ է և չունի նյութական, հոգևոր ու մշակութային բևեռվածություններ։ Նման համակարգը հենված է մարդկային ընդհանրական արժեքների վրա, որոնք բյուրեղացված, ընդհանրացված միջինն են աշխարհի տարբեր ազգերի ազգային հոգևոր, մտավոր և նյութական արժեքների։ Համակարգի կենսագործունեության ապահովումը գրեթե նույնն է, ինչ որ միատարր ազգային համակարգինը։ Իրավական հիմնական մեխանիզմը ժողովրդավարությունն է։ Գոյության և զարգացման նպատակայնությունը կառուցվում է մարդու իրավունքների, խղճի, հավատի, ազատությունների հիմնարար սկզբունքների վրա, իսկ կենսագործունեության մարտավարությունը և ռազմավարությունը՝ ըստ մեծամասնության՝ միջին թվաբանական, որոշումի և ցանկության, որի արդյունավետությունը խստորեն պայմանավորված է ընդհանուրի մեծամասնական զարգացման աստիճանով և աշխարհընկալումով։

Բազմազգը այն է, երբ ամբողջական հասարակական համակարգը կազմված է մի քանի միատարր ազգային ենթահամակարգերից։ Այսօրի-

նակ կառույցում ամեն մի ենթահամակարգի կենսագործունեությունը և զարգացումը ընթանում է ինչպես ազգային համակարգում։ Իսկ պետական ընդհանուր համակարգինը կազմակերպվում է ինչպես ժողովրդայինը, ուր որպես տարրեր վերցվում են ազգային ենթահամակարգերը։ Ընդհանրական սկզբունքային, վճռորոշ խնդիրներն այստեղ լուծվում են ըստ տարրերի մասնակի լուծումների, համամասնորեն։

Քաղաքացիականը, երբ հասարակական համակարգի ընդհանուր կենսագործունեության և զարգացման ապահովման հարցերում բացառվում է անհատի կամային միջամտությունը, այդ ամենը կարգավորվում և կառավարվում է սահմանադրության և այլ իրավական ու բարոյական օրենսդրական դաշտերի, քաղաքացիական այլ փոխհարաբերությունների միջոցով։ Ազատ մրցակցության, ինչպես և կամքի ազատ դրսևորման համար ապահովվում է հնարավորությունների և անհրաժեշտությունների միջավայր։ Այնտեղ իշխում է անհատների և ենթահամակարգերի անկախությունը, որն է՝ փոխադարձ անհակադիր բազմակախվածության դինամիկ հավասարակշռությունը։ Բոլոր ասպարեզներում կիրառվում է գիտավերլուծական կառավարում՝ ապահովելով համակարգի ընդհանրական բնականոն կենսագործունեություն և նպատակային զարգացում։

Սույն խնդրի նախապայմանների, ինչպես և գիտական լուծումների համար անհրաժեշտ է ուսումնասիրել՝ ա) հասարակության զանգվածային, բնական ընդհանրական մտածողության ձևավորման և դրսևորման, նաև գործունեության մեխանիզմները, օրենքները և սկզբունքները, բ) պետության և հասարակության միկրո, մակրո և մեգա կառույցների բնական, պետական, հասարակական համակարգերի և նրանց տարրերի բնական ֆունկցիոնալ փոխհարաբերությունների (ազդեցությունների և հակազդեցությունների)՝ ըստ ժամանակի պահպանվող և բնապատմական զարգացման մեջ գտնվող օրենքները, ուր ժողովրդավարական քաղաքացիական համակարգը պետք է դիտարկել որպես դինամիկ, բնական, գիտավերլուծական ղեկավարման նախնական համակարգ։ Հնարավոր կդառնա ստեղծել պետության և հասարակության պետական և ոչ պետական կառույցների աքսիոմային համակարգեր և նրանց տարրերի սահմանումային բազան։ Այդ հենքի վրա արդեն կարելի է փորձել կառուցել անհատի և ժողովրդի (այս դեպքում՝ հայ ժողովրդի) բնապատմական, աշխարհաքաղաքական զարգացման ներկայիս փուլին համապատասխան պետության, հասարակության և անհատի մեկ ընդհանրական համակարգի անհակադիր կառույց, այն է՝ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող, ինքնազարգացող, այսինքն՝ գիտավերլուծական ղեկավարման պետության մոդել։ Ընթացքում, զուգահեռաբար, որպես մասնակի, այժմեական կիրառման լուծումներ, կունենանք սահմանադրական, իրավական, բարոյական և սեփականության դաշտերի, նրանց բնական դրսևորումների ու գործունեության տնտեսական, կազմակերպչական, կառուցվածքային որոշ ձևեր և լուծումներ։

Կարծում ենք, որ բնագիտական, հասարակական, քաղաքագիտական վերլուծությունների, հաշվարկների և կառուցվածքային նոր՝ Հայոց պետականությանը համապատասխան պետության գիտավերլուծական ղեկավարման կառույցի ստեղծման ճանապարհով կարելի է արդյունավետորեն արագացնել Հայաստանի Հանրապետության համար շուկայական հարաբերություններով կարգավորվող, ժողովրդավարական, իրավական պետության ձևավորումը և կայունացումը, ապահովել հայության, հայոց պետականության բնականոն զարգացումը՝ զուգահեռաբար հստակեցնելով նաև մեր տեղն ու դերը ընդհանրական քաղաքակրթության մեջ։

Գիտավերլուծական ղեկավարման պետության կառույցն իր կառուցվածքի սկզբունքային ձևով համընդգրկուն է և այդ չափով կիրառելի բոլոր նորանկախ պետությունների համար։ Ազգային առանձնահատկությունները և բնատարածքային, բնապատմական զարգացածության գործոնները կառուցվող մոդելում հիմնականում ներկայանալու են որպես փաստարկա-

յին արժեքներ և ոչ ֆունկցիաներ։ Այնպես որ, այլ պետությունների կողմից այս մոդելի կիրառման համար անհրաժեշտ կլինի նաև, որ դրանք ուսումնասիրեն, ձևակերպեն և համակարգեն իրենց ազգային առանձնահատկությունները՝ որպես փաստարկային արժեքներ։

Երբ բոլոր պետությունները անցնեն բնական ինքնակարգավորման, ինքնակառավարման, այսինքն՝ գիտավերլուծական ղեկավարման, ապա աշխարհը, համայն քաղաքակրթությունը, որպես մեկ ընդհանրություն, նույնպես կվերածվի ինքնակարգավորվող, ինքնակառավարվող ընդհանրական դինամիկ՝ մեգահամակարգի։

Հիմնահարցը, որն այսօր մտահոգում է շատ հետազոտողների, առաջնայնորեն պայմանավորված է վերակառուցման գործընթացով, երբ բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների և նրանց ժողովուրդների առջև հանպատրաստից ծառացել է բավական լուրջ խնդիր՝ կարճ ժամանակահատվածում և հնարավորին չափ նվազ կորուստներով ապահովել իրենց երկրներում նոր կենսաձևի անցումը։ Այս խնդրում առկա են հետևյալ երևույթները. ա) խորհրդային տնտեսական հարաբերությունների արագ, անկառավարելի փլուզումը տվյալ երկիրը կարող է տասնյակ տարիներով հետ շպրտել, որը կուղեկցվի հասարակության և պետության տնտեսական, բարոյական և նյութական առավելագույն կորուստներով. բ) նախկինում ձևավորված հասարակությունը վերաձևավորման իր այս շրջանում կարող է կորցնել իր հոգևոր և մտավոր ներուժի և կարողության մի ստվար մասը. դ) շատերը մերժելով «ապագա ընդհանրական բարեկեցության ստեղծումով միայն անցնել «անհատական բարեկեցության» կարգախոսը, հակադրման սկզբունքից ելնելով, որդեգրում են դրան ճիշտ հակառակ մոտեցում՝ «անհատական լիակատար բարեկեցության ստեղծումով ապահովել միայն ընդհանրական բարեկեցությունը»։ Վերջինս, իր ձևավորման սկզբնական շրջանում ունենալով դրական՝ արդյունքներ, զարգացման մի որոշակի շրջանից հետո, հասարակական կարգավորվածության աճմանը զուգընթաց, լրջորեն վտանգում է հասարակության հոգևոր և կառուցվածքային ընդհանրության գոյությունը։ Հասարակությունը հասցվում է բնական ինքնատրոհման վիճակի։ Բնականաբար, ինքնանպատակության հասնող կենսագործունեությանն անհրաժեշտ լիակատար նյութական ապահովմանը զուգահեռ, ելնելով այդօրինակ համակարգի կառուցվածքային օրինաչափություններից, այս մոտեցումը չի կարող ապահովել հոգևոր և նյութական արժեքների զուգորդված ստեղծման և կուտակման բնական փոխլրացումային անհրաժեշտությունը։ Ընդամենը հակադրվածության գործոնն է, որ դեռևս թույլ չի տալիս միաժամանակյա ներդաշնակության, բնական հաջորդական փոխլրացումային շարունակականության մեջ տեսնել այդ երկու հակադիր ելակետային մոտեցումները։

Վերակառուցման խնդրի արագ լուծման համար նոր ազատագրված երկրները, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը, հիմնականում որդեգրում են հետևյալ խիստ վտանգավոր ուղին. ձևավորված, արդյունավետ գործող և բարգավաճող մի քանի պետությունների կառուցվածքային մոդելներից վերցնում են որոշակի ձևեր ու կառույցներ և դրանց հիմքի վրա փորձում կառուցել սեփական պետության ապագա մոդելը՝ ակնկալելով, որ այն արագորեն կհասցնի տվյալ պետությունների նյութական և հոգևոր զարգացածության աստիճանին։ Անտեսվում է այն, որ այդ պետությունները ձևավորվել են պատմականորեն՝ անցնելով ներքին բախումների, փորձի և սխալի մեթոդով պայմանավորված բնապատմական զարգացում։ Անտեսվում է և այն, որ տվյալ պետությունները իրենց այսօրվա ձևն ու բովանդակությունը ստացել են՝ գտնվելով իրենց ժողովրդի ազգային էության և բովանդակության, հասարակական դիտակցության, զանգվածային մտածողության, ազգային սովորույթների, աշխարհընկալումների և ազգային աշխարհաճանաչողության հետ համապատասխանության մեջ։ Այսինքն՝ ամեն մի ժողովուրդ, ամեն մի ազգ իր պետականությունը կա-

ոուցում է, ձևավորում է իր ծագումնաբանական ժառանգության, իր էության, իր ազգային ԵՍ-ին համապատասխան։

Ըստ Բլոուերի անշարժ կետի թեորեմի, տոպոլոգիական յուրաքանչյուր ձևափոխության ընթացքում համակարգի կետերի՝ տարրերի, բազմության մեջ առնվազն մեկ կետ մնում է անշարժ։ Այսինքն, տոպոլոգիական յուրաքանչյուր ձևափոխության ժամանակ ինչպես էլ որ շարժվեն, ինչպիսի փոփոխություններ էլ որ կրեն համակարգի բոլոր կետերը, կգտնվի առնվազն մեկը, որը չի ենթարկվի և ոչ մի փոփոխության։

Դիտելով ազգի և նրա պետականության զարգացումը որպես տվյալ հասարակական համակարգի տոպոլոգիական ձևափոխությունների շարունակական հաջորդականություն, բնական կլինի ենթադրել, որ հասարակական համակարգի տարրերի բազմության անշարժ կետը, մշտապես պահպանվողը, չձևափոխվողը, հաստատունը տվյալ ազգի ազգային ծագումնաբանական բնութագիրն է։

Այսպիսով, որևէ ազգի, ժողովրդի համար հանպատրաստից ստեղծված և նրան պարտադրված պետականության մոդելը, ուր հաշվի չի առնված տվյալ ազգի ծագումնաբանական բնութագրի, նկարագրի և պետականության տվյալ մոդելի համապատասխանությունը, բնականորեն այդ հասարակությանը կհասցնի կենսագործունեության և առավելապես զարգացման խնդիրներում լուրջ հակասությունների՝ իրենց անցանկալի հետևանքներով։ Նշենք նաև, որ սեփական խնդիրների լուծման ժամանակ այլ պետությունների մոդելներն ընտրելիս ոչ պակաս կարևորությամբ պետք է հաշվի առնել նաև այնպիսի գործոններ, որպիսիք են տվյալ պետության տարածքը, բնական հարստությունները, ժողովրդի քանակը, խտության բաշխվածությունը, ժողովուրդ-տարածք բազմաբնույթ հարաբերությունները, պետության աշխարհագրական դիրքը (լեռնային է թե դաշտավայրային, ծովափնյա է թե լրիվ ցամաքային, աշխարհագրական բնակլիմայական ինչպիսի գոտում է գտնվում և այլն)։ Մեծ պետությունների մոդելները երբեք նույնաբար չեն գործում փոքր պետության դեպքում, քանզի նրա բոլոր արդյունավետ կառույցները մեծ մասամբ դառնում են չգործող և անարդյունավետ փոքր պետությունների համար։

Անպատրաստվածության, շտապողականության պայմաններում վերակառուցողական խնդիրների լուծման արդյունքներն այսօր ակնհայտ են։ Նախկին խորհրդային գրեթե բոլոր հանրապետությունները ընկել են անասելի ծանր ճգնաժամի մեջ։ Իսկ այդ հիմնահարցերը միայն իրենցը չեն, քանզի աշխարհը մեկ ընդհանրություն է, և նրա մի նշանակալի մասի ճգնաժամային երևույթները որոշակիորեն ազդում են մյուսի վրա, պահելով աշխարհը անկայուն հավասարակշռության, լարվածության վիճակում։ Մյուս կողմից, անկախ վերակառուցողական այս գործընթացից, բնապատմական զարգացումն այսօր նախնական իր քայլերով հստակորեն մտնում է ինքնակարգավորվող, ինքնակառավարվող պետությունների պատմական դարաշրջան։ Այս նոր հասարակարգի լիարժեք ձևավորումը աշխարհը հասցնելու դինամիկ հավասարակշռության, առանց ցնցումների և կորուստների, բնականոն, նպատակային գոյության և զարգացման։ Երբ մարդկությունը աստիճանաբար կձերբազատվի միայն ամենափոքր գործողության սկզբունքով պայմանավորված լոկ գոյատևման (կենսագործունեության, կենսապահովման) վայրի, իմաստազուրկ ինքնանպատակությունից, այնժամ մարդը, հասարակությունը, որպես մատերիայի ինքնավերարտադրվող, բանական և բարձրագույն ձև, հենվելով նաև միայն իրեն՝ բանականությանը հասու և յուրահատուկ նպատակամետ գործողության սկզբունքին, կթևակոխի հարատևման՝ նպատակային գոյության և կենսագործունեության ժամանակաշրջան, ուր գոյության բնական պայքարը արդ տարվելու է ոչ միայն հանուն լոկ գոյության, լինելիության, այլև հստակորեն ձևավորվելու է պայքար՝ հանուն քաղաքակրթության։ Ստեղծագործական այդ պայքարում ամեն մի ազգ և ժողովուրդ, ըստ իր հոգևոր, մտավոր բարոյական կարողու-

թյունների, ձգտելու է գտնել իր ճիշտ տեղը, դերը և նշանակությունը համաշխարհային ընդհանրական քաղաքակրթության մեջ։ Այս անհրաժեշտ առաջադիմական պայքարում հստակվելու է այն, թե համաշխարհային ընդհանրական զարգացման տվյալ ժամանակահատվածում ո՛ր ազգը, ո՛ր պետությունն ինչ չափով է մասնակից ընդհանրական քաղաքակրթության արարմանը և ինչ մասով է նրա սպառող։

Իրոք, ըստ բարձրացման ներկա ժամանակաշրջանում արդեն ձևավորվում է այն ստորոգելին. երբ ամեն մի ժողովուրդ և պետություն ձգտելու է իր առավելին հասնել ազգային հարստություններով և մասնակցել ընդհանրական քաղաքակրթության զարգացմանը, քանզի այդպես իրավամբ ավելի կբարձրացնի իրենց արժանապատվությունն ու հարուստ կենսագործունեությունն ու ստեղծումը, որոնք կապահովվի անհատական և կոլեկտիվ անվտանգությունը թե՛ միմյանցից և թե բնության բազմաբնույթ ազդեցություններից։

Այսպիսով, հայկական գիտառազմավարական հետազոտությունների, հրատապ անհրաժեշտության խնդիրները հետևյալն են՝ գտնել, ձևավորել և ընդհանրական համակարգման բերել մարդկության, քաղաքակրթության բնապատմական, աշխարհաքաղաքական զարգացման արդի փուլին համապատասխան Հայոց պետության և Հայ հասարակության անհատական կառույցների, այն է՝ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող, ինքնազարգացող, դեմոկրատական ղեկավարման պետության ընդհանրական մոդելը, ըստ հիմնական այսօրինակ պետության և հասարակության սահմանադրական, իրավական, բարոյական, սեփականության ձևերի, տնտեսական, կառավարչական կառուցվածքային օրենքները, օրինաչափությունները. ձևակերպել այդ օրենքներով կարգավորվող հոսքեր փոխառնչությունների բնական, դինամիկորեն կայուն հավասարակշռության խնդիրները, տալ նրանց լուծումները։

Հենվելով «Համակարգը մեկ ընդհանրություն է», «Կարգավորվածության և քաոսի օրենքները հավասարաչափ և նույնականորեն ընդհանուր են Համայնի բոլոր երևույթների համար» հիմնադրույթներին, հասարակական համակարգը դիտենք որպես միմյանց փոխառնչվող, տարրերեն՝ անհատներից կազմված ընդհանրական մի ամբողջություն, որը կառուցված է, ենթարկվում և գործում է իրեն յուրահատուկ, որոշակի բնական օրենքներով և օրինաչափություններով։

Այդ համակարգերը ձևավորվում, ծավալվում, սահմանվում և հարատևում են իրենց տարրերի փուլային կենսագործունեության՝ ծննդի-աճի-ռացման-վերարտադրման-արժեքների ստեղծման, կուտակման և ժառանգման-մահվան հաջորդականության շարունակական պահպանման և զարգացման լայնահունված ռիսկայնության դինամիկ գործընթացով։

Վաղուց ի վեր հայտնի է, որ հասարակական համակարգերը օժտված են բնական ինքնակարգավորման, ինքնակառավարման և ինքնազարգացման երևույթներով։ Այդ երևույթները ածանցյալ են ավելի հիմնարար օրենքներից, որոնց որոնումը մարդկային մտքի, գիտության և զարգացման գործընթացի մշտական, հրատապ խնդիրներից է։

Հասարակական համակարգերին յուրահատուկ բնագիտական օրենքների ձևավորման գործընթացը, նրանց ուսումնասիրությունը, համակարգումը առավել դյուրին կլինեին, եթե փորձենք դրանք կառուցել տարածաժամանակի, մոտերևույթ ֆիզիկական օրենքների համանմանությամբ և ու նույնությամբ՝ հենվելով հայտնի մտածողական ձևերի, մեթոդների, եզրահանգումների, ընդհանրացումների, ֆիզիկամաթեմատիկական գիտավերլուծական, արմատական մոտեցումների և ապարատների վրա։ Կյանքի ընկալումը կընդարձակվի՝ տարածելով այն ողջ համայնի վրա, դիտելով այն որպես ընդհանրական մատերիայի էվոլյուցիայի հիմնական օրենք։

Հասարակական միկրո, մակրո և մեգա համակարգերի գոյությունը և կենսագործունեությունը, պայմանականորեն վերցրած ներկայացվում է որպես «իներցիալ շարժում»։ Շարժման արագությունը որոշելու է տվյալ համակարգի կենսամակարդակի զարգացածության առկա չափը, և, ըստ հաշվարկի համակարգի, հարաբերական է։ «Իներցիալ շարժումը» ընդհանուր համակարգի քաղաքակրթական տարածության, նույնն է, թե նրա սեփականության դաշտի և ենթահամակարգի սեփականության դաշտի փոխազդեցությունն է։

Հասարակական համակարգերի իներցիալ փոխհարաբերությունները՝ փոխազդեցությունները, կարգավորելու են «շարժման քանակի» պահպանման օրենքով։ «Շարժման քանակը» հասարակական համակարգը բնութագրող հասարակական-բնագիտական մի մեծություն է, որը պայմանավորված է համակարգի «արագությամբ» և նրա «քաղաքակրթական զանգվածով»։ Այստեղ «զանգվածը» տվյալ համակարգի ներտության չափն է։ Իսկ հասարակական համակարգի զարգացումը (որը ներառում է կենսաբանական, նյութական, հոգևոր, մտավոր և տեղեկատվական արժեքների, նրանցով փոխկապակցված ազդեցությունների անընդհատ վերաիմաստավորման հաջորդականության շարունակական զարգացում և կուտակում), դիտարկվելու է որպես տոպոլոգիական անշրջելի ձևափոխությունների շարունակական անընդհատություն։ Այդ փոխազդեցությունները իրենց վերլուծական տեսքով նույնպես ուղիղ համեմատական կլինեն համակարգերի զանգվածներին և հակադարձ համեմատական՝ նրանց միջև եղած հեռավորության քառակուսուն (քաղաքակրթական ձգողության օրենք)։

Հասարակական համակարգերի զարգացման որակական՝ ոչ գծային, անցումը կդիտվի որպես դինամիկ համակարգի բիֆուրկացիա, իսկ ժամանակային առանցքի այն ժամանակահատվածը, ուր տեղի է ունենում ոչ գծային անցումը, կլինի մեր բիֆուրկացիոն կետը։

Դիտենք հասարակական յուրաքանչյուր կառույց՝ լինի դա ժողովուրդ, ազգ, պետություն թե համայն քաղաքակրթությունը որպես առանձին ընդհանրության ամբողջական և ըստ ժամանակի դինամիկական համակարգ, ինչպես նաև՝ ծագումնաբանական, հոգևոր, մշակութային, սոցիալական մեկ օրգանական ընդհանրություն։ Հասարակական համակարգի ընդհանրական զարգացումը՝ (ոչ իներցիալ՝ արագացումով շարժումը), որը ներառում է կենսաբանական, նյութական, հոգևոր, մտավոր և տեղեկատվական արժեքների, նրանցով փոխկապակցված ազդեցությունների անընդհատ վերաիմաստավորման հաջորդականության զարգացում և կուտակում, կարելի է դիտել որպես տոպոլոգիական անշրջելի ձևափոխությունների շարունակական անընդհատություն։ Յուրաքանչյուր հասարակական համակարգի զարգացման ընթացքը շարունակաբար մնում է անընդհատ այնքան ժամանակ, քանի դեռ գտնվում է տվյալ համակարգի կենսագործունեության, հասարակական փոխհարաբերությունների կարգավորման, կառավարման և ղեկավարման օրենքների և օրինաչափությունների թույլատրելիության սահմանների միջակայքում։ Երբ հասարակության բնական զարգացման, այսինքն՝ տվյալ համակարգի տոպոլոգիական ձևափոխության հետևանքով ձևավորված նոր համակարգը չհամապատասխանելով, այլևս չի տեղավորվում կառավարման օրենքների հին դաշտում, առաջանում է հակասություն, տեղի է ունենում որակական անցման բիֆուրկացիոն երևույթ, որով և խզվում է զարգացման տոպոլոգիական ձևափոխությունների, գործընթացի անընդհատությունը։ Այսինքն, երբ հասարակական համակարգի առկա կարգավորվածության ներքին լարվածությունը անցնում է թույլատրելիության սահմանները, դուրս է մղվում կայունության տիրույթից, մտնելով ռեսուրսի փուլ, ուր համակարգը՝ ատտրակտորների հին խմբով պայմանավորված, իր հաջորդ կարգավորվածությունից վերադասավորվում և վերակարգավորվում է ըստ նոր ատտրակտորների։ Այսպիսով՝ անհամապատասխանության ներլարվածությանը հաջորդող խզումով համակարգը հին, ավելի պարզունակ

կարգավորվածության վիճակից կատարում է բիֆուրկացիոն անցում՝ մըտնելով նոր, կառուցվածքային առումով ավելի բարդ կարգավորվածության դինամիկ հավասարակշռվածության վիճակ (պարզից դեպի բարդի անցում՝ էվոլյուցիայի դրական ուղղվածություն, նույնն է, թե՝ զարգացում, իսկ բարդից դեպի պարզի անցումը՝ էվոլյուցիայի բացասական ուղղվածություն, նույնն է, թե՝ ապաշարգացում)։ Բիֆուրկացիոն անցումը չի բացառում նաև անկայունության՝ քաոսի, փուլում համակարգի ոչնչացման, ինչպես նաև ինքնաոչնչացման հավանականությունը։ Համակարգի այդ անցումը՝ վերադասավորումը, բնույթով ոչ գծային է, թռիչքային, այսինքն՝ այն պատճառահետևանքային առումով գծայնորեն անհաշվելի է, սակայն դա ամենևին չի նշանակում, որ այն ընդհանրապես անկանխատեսելի է։

Հասարակական համակարգերի զարգացման տոպոլոգիական ձևափոխությունների անընդհատության նման խզումը մեկ պետության զարգացման գործընթացում արտահայտվում է ներքին ընդվզումների, հեղափոխությունների տեսքով, իսկ աշխարհի բնապատմական զարգացման, այսինքն՝ ընդհանրական ձևափոխությունների առումով, ժամանակային ավելի լայն հատվածներում, արտահայտվում է որպես հասարակական ֆորմացիաների փոփոխություն։

Հասարակական համակարգի բնական զարգացման տոպոլոգիական ձևափոխության անընդհատության խզման, բիֆուրկացիոն անցումի՝ հեղափոխության կամ այլ նմանօրինակ երևույթի բնույթը, խորությունը և հետևանքները պայմանավորված են հիմնականում հին համակարգի կառավարման ոչ դինամիկության՝ կարծրության չափով։ Որքան այն կենտրոնաձիգ է, ոչ ժողովրդավարական, որքան նրա ներքին փոխհարաբերությունները կարգավորող օրենքները և դրանց կապերը ամուր են և ենթակա չեն բնական ինքնակարգավորման, ինքնավերաձևավորման և ինքնազարգացման, այնքան ավելի հիվանդագին է ընթանում հնից դեպի նորի անցումը։ Ըստ էության, այստեղ առկա է հասարակական համակարգի բնական ինքնավերարտադրվող, ժամանակից ֆունկցիա հանդիսացող, կատարյալ օրենքների և արհեստական՝ ըստ ժամանակի ոչ դինամիկ, կարծր, թերի օրենքների բախման երևույթ։ Այն հստակորեն երևում է քաղաքակրթության զարգացման բոլոր ֆորմացիաների անցման շրջաններում, իր յուրահատուկ հետևանքներով, հոգևոր-նյութական բազում կորուստներով, զարգացման արգելակվածության ժամանակաշրջաններով, ինչպես և բնապատմական զարգացման գործընթացի մշտապես անշրջելիության օրինաչափ երևույթով։

Եթե XVIII—XIX դդ. բնութագրվում են որպես աշխարհի մեխանիկական, կինեմատիկական պատկերի ձևավորման հաղթարշավի դարաշրջաններ, ըստ որի, նյութական աշխարհի գործընթացները շրջելի են ըստ ժամանակի, ապա նյութի մոլեկուլյար կառուցվածքի և թերմոդինամիկայի զարգացումով արդեն լուրջ հարցականի տակ դրվեց անդամ նյութական աշխարհի բնականոն գործընթացների շրջելիության հարցադրումը։ Այսօր արդեն գրեթե ստվիճելի է, և ամենուր հաղթող է, նյութական աշխարհում ևս բոլոր գործընթացների անշրջելիության տեսակետը։

Մինչև վերջերս մատերիայի ապրիորի լինելիության, նույնն է, թե հարատևման, աշխարհընկալման մեջ առկա էր երկփեղկվածություն։ Նյութական՝ ֆիզիկական աշխարհը համարվում էր նախնականորեն տրված, իսկ նրանում մատերիան ընդամենը մի ձևից կարող էր փոխակերպվել մի այլ ձևի։ Ֆիզիկական նյութի կառուցվածքային հիմքը հանդիսացող տարրական մասնիկների՝ էլեկտրոնի և պրոտոնի կյանքի տևողությունը համարվում էր անվերջ, որով և պայմանավորվում է նյութական աշխարհի հարատևումը։ Իսկ մատերիայի մյուս՝ կենսաբանական ձևը, որն իր մեջ ընդգրկում է բուսական, կենդանական և մարդկային հանրության աշխարհները, ընկալվում է իբրև մատերիայի ինքնավերարտադրվող ձև, որն իր հարատևումը ապահովում է կյանքի (ծննդի և մահվան, տեսակների ծագումնաբանական, ար-

ժեքների ձևավորման, զարգացման, կուտակման և դրանք սերունդներին հաջորդաբար փոխանցման), լինելիության միջոցով։

Այսօր, ֆիզիկայի զարգացման ներկա փուլում, երբ լրջորեն կասկածի տակ է առնված անգամ էլեկտրոնի և պրոտոնի նախնականորեն տրված լինելը, երբ առաջադրված է դրանց ծննդի, զարգացման և մահվան գաղափարը, արդեն վերանում է տարածաժամանակի ու մատերիայի աշխարհընկալման երկփեղկվածությունը։ Նախկին աշխարհընկալումը զարգանում է, մզում նոր ընդհանրացման՝ ընդհանրականը իր գոյության և զարգացման ամբողջության մեջ հարատևում է իր ամեն մի ենթաընդհանրության՝ տեսակի, յուրաքանչյուր ատոմար տարրի՝ անհատի, ծննդի, զարգացման, ինքնավերարտադրման և մահվան բնական շարունակական հաջորդականության միջոցով։

Աշխարհի, մատերիայի բոլոր ձևերի գոյությունը, կենսագործունեությունը, զարգացումը ժամանակի առումով անշրջելի գործընթացների՝ տոպոլոգիական ձևափոխությունների շարունակական անընդհատություն են, որն այլ կերպ, մեկ ընդհանրացումով, կսահմանենք որպես տարածաժամանակային ամբողջության մեջ ընդհանրականի՝ մատերիայի հարատևում։

Հասարակության, որպես մատերիայի ինքնավերարտադրվող և բանական ձևի գոյությունը, կենսագործունեությունը և զարգացումը ապահովվում են մի կողմից կառուցվածքային բնական օրենքներով և օրինաչափություններով (առաջնայնության հիմքում ունենալով տեսակի պահպանման օրենքը), մյուս կողմից, իր՝ մարդու, ստեղծած կառավարման համակարգերի և օրենսդրական դաշտերի միջոցով։ Եթե հասարակության ինքնակարգավորման, ինքնակառավարման բնական օրենքները, որոնք զգայական դաշտից վերհանվում և վերգտնվում են բանականության կողմից և իրենց ձևավորման ու զարգացման ընթացքում, փորձի ու սխալի մեթոդով, համապատասխանության մեջ են դրվում ժամանակի համեմատաբար խիստ կարճ հատվածների ընթացքում, ապա նույնը չի կարելի ասել պետության կամ այլ փոքր ու մեծ հասարակական կառույցների կառավարման և կազմակերպչական այլ մեխանիզմների համար մարդու կողմից ստեղծված օրենսդրական դաշտերի որակական վերակարգավորման և նրանց դինամիզմի մասին։ Այն հիմնականում որոնվում, գտնվում և ձևավորվում է «Անհրաժեշտության», «Փորձի ու սխալի» մեթոդներով՝ հիմքում լինելով ոչ դինամիկ, էությամբ՝ խիստ պահպանողական։ Բնականաբար, ձևափոխության անհրաժեշտությունը ծագում է միայն զարգացման ճանապարհով ձևավորված նոր իրականության և հին դաշտի հակասության, նրանց բախման ճանապարհով։

Քաղաքակրթության զարգացման ներկա փուլում՝ հոգևոր-մշակութային, գիտական, գիտատեխնիկական և տեխնոլոգիական ներունակության առկա հնարավորությունների պայմաններում, լրիվ հնարավոր է դարձել հասարակական տարբեր համակարգերի՝ առաջնայնորեն պետության, ղեկավարման կառուցվածքային ձևերն ու օրենսդրական դաշտերը վերակառուցել, տալով նրանց դինամիկ զարգացման հնարավորություն և վերափոխել նրանց մեծահատված դիսկրետությունը, ձգտելով այն դարձնել անընդհատ ֆունկցիա ժամանակից։ Այդօրինակ մոտեցումով հնարավոր կլինի, փորձի և սխալի մեթոդով, ընդհանրական գործընթացի ինքնաճշտման ժամանակահատվածը տասնամյակներից և հարյուրամյակներից նվազեցնել տարիների, ամիսների, որոշ խնդիրներում անգամ՝ օրերի ու ժամերի։

Զուգահեռաբար հասարակական ամեն մի խնդրի, գործընթացի կողմից ընդգրկվող ընդհանրական քաղաքակրթական զանգվածը կմասնատվի փոքր զանգվածների, համապատասխանաբար կնվազի դրանց իներտությունը, որը գոմարային առումով կնվազեցնի ընդհանուր համակարգի իներցիան։ Այդ կերպ հասարակական ընդհանուր համակարգը որակական անցում կկատարի դեպի բարձր դինամիզմի և նվազագույն կորուստների՝ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող համակարգ։ Այսպիսով, այսօր արդեն, ան-

հրաժեշտությունների և հնարավորությունների առկա պայմաններում, կենսաանհրաժեշտություն է դարձել հասարակական համակարգերի՝ առավելապես պետության, գիտավերլուծական ղեկավարման գիտառազմավարական հետազոտություններում բնագիտական-հասարակագիտական մոտեցման պահանջը։

Դարասկզբի ճգնաժամն իր լուծումը գտավ աշխարհը երկու ծայրահեղ հակադիր բևեռների կիսելու ճանապարհով, որոնց 70-ամյա համատեղ զարգացումը, փոխադարձ ազդեցությունների և հակազդեցությունների ճանապարհով, արագացրեց ընդհանրական քաղաքակրթության պոստինդուստրիալ հասարակարգի ավարտուն ձևավորվածությունից դեպի զարգացման նոր՝ բնական, գիտավերլուծական ղեկավարման, նպատակային կայուն զարգացման, դինամիկ հավասարակշռության ֆորմացիայի ձևավորման ռեալությունը և նրա բնականոն կենսաանհրաժեշտության գիտակցումը։ Այդ գործընթացը զուգահեռաբար ապահովեց նաև քաղաքակրթության գիտավերլուծական կարգավորվածության որակական վերաձևավորման, արժեքների վերաիմաստավորման բիֆուրկացիոն դրական անցման հավանականությունը։

Ըստ էության, առկա վերակառուցողական քաղաքականությունը կարելի է դիտել որպես ընդհանուր պատմական գործընթացի գիտավերլուծական ղեկավարման ենթագիտակցական առաջին փորձ։ Այն իրականացրեց իր առջև դրված խնդրի առաջին մասը՝ ԽՍՀՍ-ի և սոցհամագործակցության ինքնափլուզման ղեկավարելիությունը։ Եվ դժվար է ասել միտումնավոր թե ակամայից բարձիթողի արվեցին այս գործընթացի բնական շարունակություն հանդիսացող հաջորդ մասերը։ Դրանք են՝ 1) ամեն մի նորանկախ երկրի համար վերակառուցման համապատասխան գիտավերլուծական ղեկավարման ապահովումը և 2) աշխարհի չվերակառուցվող մասի հետագա զարգացման վրա վերակառուցման բնական ազդեցության խնդիրները։

Որքան էլ տարօրինակ է, այդուհանդերձ, ԽՍՀՄ-ի փլուզման պատճառներից է նաև նրա զարգացումը։ Բնականաբար, ԽՍՀՄ-ի և սոցհամագործակցության փլուզման բիֆուրկացիայի այդ երևույթը աշխարհի ընդհանրական զարգացման գործընթացում տոպոլոգիական մի նոր ձևափոխություն է, որ հարկադրաբար անդրադառնալու է աշխարհի երկրորդ կեսի վրա, ուր նույնպես հաջորդ փուլով ընթանալու են արմատական լուրջ վերափոխումներ։ Այդ տեսակետից նույնպես խիստ կարևորվում է, որ ոչ թե փորձ արվի սոցլագերը վերակառուցել հար և նման դարասկզբին, այլ փորձել ճիշտ օգտվել այսօրվա իրականությունից և չվտանգել թե՛ նորանկախ երկրների վերակառուցումը և թե աշխարհի երկրորդ կեսի բնականոն զարգացման ընթացքը։

Անհրաժեշտության խնդիր է այսօր բնական օրենքներով և սկզբունքներով գործող, գիտավերլուծական ղեկավարման պետության նախնական մոդելի կառուցումը, որն ըստ կիրառելիության, պետք է հաշվի նստի և համաձայնության մեջ գտնվի տվյալ ազգի ծագումնաբանական, հոգևոր, մտավոր և նյութական պոտենցիալի առկա հնարավորությունների հետ և ըստ ժամանակի, զարգացման աստիճանի, ինքնակարգավորման մեխանիզմով մշտապես ներդաշնակի ընդհանրական քաղաքակրթությանը, նրա բնապատմական գործընթացին։

Այս խնդրի լուծման համար, որպես անհրաժեշտ նախապայմանային լուծումներ, հարկ է հենվել՝ ա) մաթեմատիկական դինամիկ համակարգերի, երկրաչափությունների, տոպոլոգիայի, աքսիոմային տեսությունների ու ապարատների և բ) հասարակության համակարգային բնական պահպանվող և ըստ ժամանակի փոփոխվող օրենքների և օրինաչափությունների վերլուծական ապարատի վրա, ուսումնասիրվեն, հանգեցվեն գիտական վերլուծության, համակարգման և պատմական զարգացման ժամանակագրական դասակարգման.

1. Հասարակության զանգվածային ընդհանրական մտածողության ձևավորման գործունեության բնական մեխանիզմները, օրենքները և օրինաչափությունները։

2. Սեփականության (հողեղեր, մտային, նյութական, տեղեկատվական արժեքների) դաշտը՝ հասարակության կառուցվածքային բոլոր ձևերում և նրա կենսագործունեության ու զարգացման դինամիկայում՝ որպես առանցքային, հիմնական մեխանիզմ։

3. Ընդհանրական քաղաքակրթության, հասարակությունների, օբյեկտների և սուբյեկտների սեփականության դաշտերի փոխազդեցությունների սկզբունքները, օրենքներն ու օրինաչափությունները։

4. Հասարակության միկրո, մակրո և մեգա կառույցների բնական, ըստ ժամանակի և տարածության պահպանվող, ինչպես նաև դինամիկ զարգացման մեջ գտնվող օրենքներն ու օրինաչափությունները։

5. Հասարակական կառույցների և նրա տարրերի հասարակական տարրեր կառուցվածքների բնական ֆունկցիոնալ փոխհարաբերությունների՝ ազդեցությունների և հակազդեցությունների պահպանվող և դինամիկ զարգացման մեջ գտնվող օրենքներն ու օրինաչափությունները։

6. Հասարակության, հասարակական կառույցների, պետությունների և ժողովուրդների բնական, սեփական աշխարհաճանաչողական և աշխարհընկալումային, բարոյահոգեբանական, իրավական, պետական և ոչ պետական, կարգավորվող և ինքնակարգավորվող կառույցների, փոխհարաբերությունների ֆունկցիոնալ և վիճակագրական, պահպանվող և բնական ինքնազարգացման հաջորդական լրացման մեջ գտնվող սկզբունքները, օրենքները և օրինաչափությունները։

7. Ընդհանրական քաղաքակրթության, ինչպես նաև ամեն մի պետության և ժողովրդի հասարակական կարգավորվածության և ապակարգավորվածության հարաբերության կայունացման խնդիրները, նրանց բնապատմական զարգացումը։

Այս ուսումնասիրությունների հարուստ գիտական նյութը հնարավորություն կընձեռի ձևակերպել հասարակության պետական և ոչ պետական կառույցների աքսիոմային համակարգերը՝ իրենց տարրերի սահմանումային բազայով, իսկ պետության և հասարակության կառուցվածքային դինամիկ մոդելը կգտնի համապատասխան անհրաժեշտության վերլուծական այն անհրաժեշտ ապարատները, որոնց միջոցով կլուծվեն պետության և հասարակության սահմանադրական և իրավական կառուցվածքային արդի խնդիրները։

Դրա հետևանքով հնարավոր կդառնան.

ա) Մարդու, հասարակության, քաղաքակրթության բնապատմական, աշխարհաքաղաքական զարգացման ներկայիս փուլին համապատասխան պետության և հասարակության, Հայոց Պետականության անհակադիր կառույցի, որն է՝ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող, ինքնազարգացող՝ գիտավերլուծական ղեկավարման, պետության ընդհանրական մոդելի ստեղծումը։

բ) Գիտավերլուծական ղեկավարման, պետության և հասարակության կառուցվածքային տեսական մոդելների և նրանց մասնակի, այսօրեական անհրաժեշտ կիրառության որոշ՝ սահմանադրական, իրավական, բարոյական և սեփականության դաշտերի գործունեության տնտեսական, կազմակերպչական, կառուցվածքային օրենքների, օրինաչափությունների և դրանցով կարգավորվող փոխազդեցությունների և բնական կայուն հավասարակշռության կենսագործունեության ու զարգացման խնդիրների լուծումների ներդրումը Հայաստանում։

Այս մոտեցումը ի զորու է նաև պետությունների և ժողովուրդների տեղայնի գործունեության գիտավերլուծական ճանապարհով, բարոյանպատակամետ կարգավորմանը զուգահեռ, լուծել աշխարհի, մարդկության ընդհանրական բնականոն, անհակադիր կենսագործունեության, խաղաղ գոյակցու-

թյան, ընդհանրական քաղաքակրթության նպատակային համընթաց լինելիության և զարգացման խնդիրները։

Որպես աշխատանքային վարկած՝ վերցնենք հետևյալը.

ա) Քաղաքացիական պետությունն իր սահմանադրական-իրավական, պետական կառուցվածքային ձևով, կյանքով և գործունեությամբ հենված լինելով Ազգի և Պետականության հարատևման և ոչ գոյատևման սկզբունքին, ազգ-պետություն միասնության մեջ պետք է կազմի մեկ ամբողջական ընդհանրություն՝ լինելով օրգանապես մեկ մարմին, մեկ ոգի, մեկ միտք, մեկ նպատակ, մեկ գործունեություն։

բ) Որպես քաղաքացիական պետության առանձնահատկություն (անհատ-հասարակություն-պետություն) փոխհարաբերություններում (անհատ-ընտանիք-տոկաղ միջավայր-ժողովուրդ-պետություն) միասնությունը սահմանվում է որպես ոչ հավաքական, այլ օրգանական մեկ ամբողջություն։ Գործում է անհակադիր, բարոյանպատակամետ ապրելու, ստեղծելու և ստեղծագործելու սկզբունքը։

Աքսիոմային մեթոդով, մաթեմատիկական խստությամբ կառուցված սահմանադրական կառույցը, իրավական, ինչպես և բարոյահոգեբանական դաշտերը պետք է լինեն պետության և անհատի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների փոխադարձ ազդեցությունների դինամիկ հավասարակշռության հաստատման և երաշխավորության գործոնները։ Նրանք պետք է հանդիսանան տվյալ հասարակության ազգային խնդիրների կատարմանը նպատակաուղղված գործունեությանն անհրաժեշտ պատճառահետևանքային կապի կարգավորման, ազգային էության, բովանդակության, նկարագրի ու կենսաձևի պահպանման, դրանց հետագա զարգացումն ապահովող և կարգավորող հիմնական համակարգեր։

Գիտական վերլուծական ղեկավարում ունեցող պետությունը իր սահմանադրական կառուցվածքով, իշխանությունների տարաբաժանման յուրահատուկ սկզբունքով, իր գործունեության և զարգացման ընթացքում պետք է հենված լինի նաև հետևյալ բնականոն հիմնաղրույթներին.

ա) Ազգը և պետությունը կոչված են հարատևելու և ոչ գոյատևելու։

բ) Ամեն մի անհատ իր մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակություններին համապատասխան, կամքի ազատ դրսևորումով, պետականության և հասարակության երաշխավորված հովանավորությամբ և պաշտպանվածությամբ պետք է գտնի և ունենա իր ճիշտ տեղը, դերը և նշանակությունը հասարակության, ինչպես և համաշխարհային քաղաքակրթության մեջ։

գ) Ամեն մի անհատ ցկյանս պետք է ունենա պետության և հասարակության կողմից բարոյահոգեբանական, նյութական և իրավական հովանավորություն, հոգատարություն և պաշտպանվածություն։

Պետությունը, ըստ իր ազգային խնդիրների, իղձերի, ստեղծելու է համապատասխան քաղաքակրթական միջավայր, գործուն մեխանիզմ ամեն մի անհատի համար, որ նա իր կյանքի և գործունեության ընթացքում, ազատ ընտրությամբ, նյութական և հոգևոր արժեքների ստեղծման ինքնադրսևորման ճանապարհով ի զորու լինի ինքնահաստատվել և գտնել իր ճիշտ տեղը, դերը և նշանակությունը իր հասարակարգում։

Այսօր, ընդհանրական քաղաքակրթության բնապատմական զարդացման այս նոր, ազգային ստեղծագործական հնարավորությունների և իրավունքների հավասարության, հոգևոր և մտավոր արժեքների աննախադեպ անհրաժեշտության պայմաններում, բոլոր ազգերի, ժողովուրդների և պետությունների համար կարևոր է դարձել յուրովի և ճիշտ ընկալել դեպքերի ընթացքը, ժամանակի ոգին, ազգային հոգևոր, մտավոր, նյութական արժեքների ներդրումով, ստեղծագործական նախաձեռնությամբ մասնակից լինել քաղաքակրթության բնապատմական զարգացման նոր հասարակարգի ձևավորման, կայացման գործընթացին։

Հայությունը և հայոց պետականությունը, որպես քաղաքակրթություն արարող, պետք է ունենա իր ուրույն ու հստակ տեղն ու դերը ընդհանրական քաղաքակրթության լինելիության, կենսագործունեության և զարգացման հարատև գործընթացում։

ЗАДАЧИ ПОИСКА ФОРМЫ И СОДЕРЖАНИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

С. Р. ШАХАЗИЗЯН

Резюме

В настоящее время глобальная цивилизация вступает в новую формацию эволюционного развития. Этой формации саморегулируемых, самоуправляемых государств своей формой и содержанием должна соответствовать армянская государственность. Рассматривая общественную систему, целостность народ-государство как форму материи, задачи поиска формы и содержания государства (в соответствии с данным уровнем цивилизационной развитости) следует искать в целостном поле естественнонаучных и обществоведческих законов и закономерностей.